



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՈՏՆԼՈՒՅԹԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ Ս. ԱՍՏՈՒՅՑԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Աւագ Յինգշաբթին մեկն աւելի խորհուրդներ ու պատգամներ ունի քրիստոնեային համար: Աւագ Յինգշաբթի նուիրուած է Վերջին Ըսթրիքին, Ոտևլուային, ապա նաեւ Խաւարման Գիշերուան:

Յինգշաբթի, 1 Ապրիլի առաւտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետց Ենսինոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին, ի յիշատակ Վերջին Ըսթրիքին եւ այդ առիթով Ս. Քաղորդութեան խորհուրդի հաստատումին:

Առաջնորդ Մրբազանը յետմիջօրեին Ոտևլուայի արարողութիւն կատարեց Կլենտէյլի Ս. Ղստուածածին Եկեղեցւոյ մեջ. այս արարողութեամբ, հաւատացեալները հաղորդակից դարձան իր աշակերտներուն ոտքերը խոնարհաբար լուալու եւ անոնց ծառայելու պատրաստ ըլլալու Ղստուածորդույոյն պատգամին: Առաջնորդ Մրբազանը իր պատգամին մեջ կանգ առաւ Յիսուսի այս արարքին մեջ խտացած խորհուրդին առջեւ ու թելադրեց, որ քրիստոնեայ հաւատացեալը իր երկնաւոր ուղեւորութեան համար օրինակ ընդունի Զրիստոսի խոնարհութիւնը:

ԽԱՄԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

Երեկոյեան, Առաջնորդ Մրբազանը Ս. Նահատակաց Եկեղեցւոյ մեջ հանդիսապետց Զրիստոսի մատևութեան ու չարչարակներուն յիշատակման յուզիչ արարողութեանց, որոնք տեւեցին մինչեւ ուշ գիշեր: Առաջնորդ Մրբազանը կանգ առաւ մարդկութեան մեղքերուն համար զոհաբերուելու եւ ծանր չարչարակներ յանձն առնելու Զրիստոսի առաքելութեան վրայ, որ արտայատութիւն է մարդկութեան նկատմամբ Ղստուծոյ ու Անոր Միածինին անսպառ սիրոյն:

MAUNDY THURSDAY COMMEMORATIONS

Maundy Thursday is a day filled with several services observing various events near the end of the earthly ministry of our Lord Jesus Christ.

On the morning of Thursday, April 1st, 2010, Divine Liturgy was celebrated in all churches, commemorating the sacrament of Holy Communion instituted by Jesus Christ at the Last Supper. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate presided over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino.

In the afternoon, the Washing of the Feet service took place in all churches, with the Prelate conducting the service at St. Mary's Church in Glendale. In his sermon, the Prelate spoke of the great example of humility set by our Lord Jesus Christ with the act of washing His disciples' feet, calling on the faithful to live and serve humbly and in His example.

In the evening, the solemn vigil service took place commemorating the betrayal and torture of our Lord Jesus Christ. The Prelate led services at Holy Martyrs Church in Encino and delivered the sermon, in which he emphasized the immense and boundless love our Lord has for us to go through the suffering He did for our salvation.